

Չենք կարծեր որ Մայր-Եկեղեցիի Կոլոտէն յառաջ Գրական կենդրոն մը եղած ըլլար. թէ անոր համար որ Մայր-Եկեղեցի մեծ հնութիւն մը շուներ եւ թէ անոր համար որ Կոլոտը կանխող ժանակին ինչպէս նաեւ պատրիարքական անուններու շուրջը չենք հանդիպիր ո՛ր եւ է գէպքի, որ բան մը յիշեցընէր Կոլոտի գործերէն ու աշխատութիւններէն:

Կոլոտի Մատենադարանը, ուրեմն, աւելի հարստացաւ Նալբանի անձնական մատենադարանով եւ այսպէս Մայր Եկեղեցի, քիչ ժամանակի մէջ, իր հովանւոյն տակ տեսաւ Կ. Պոլսոյ ամենէն հարուստ մատենադարանին առաջին հաստատութիւնը. Մատենադարան մը, որ Դպրոց մը կը ներկայացընէ, պատմական որոշ շրջան մը կը բարացուցէ, եւ երկար, շատ երկար ատեն մուացութեան դատապարտուելէ ետքը՝ նոր հաստատութեան մը առատ սնունդ կու տայ:

Վասն զի երբ Պոլսոյ մէջ խումբ մը գրասէրներ կ'որոշեն Ազգային Մատենադարան մը հիմնել, որուն հիմնական Կանոնագրութիւնը վաւերացուած է Ազգ. Կեդր. Վարչութեան Ուսմն. Խորհուրդէն, 1877 Մարտ 9ին,¹ այդ Մատենադարանի

բանտարկելոց շնորհեսցի, ձեռամբ նոցին գանձապետաց ։ Իսկ եւ զմայրն՝ բոլոր նոցա շնորհեսց, զի ո՛րքան որ գիրքս այս հատնի, կրկին այնու մայր գնովն տպեսցի եւ վաստակն անդրէն ի պէտս նոցա աւելցնցի (Գանձարան Ծանոցմանց, Տպ. 1758, Կ. Պոլիս, էջ 5—6)։ Ի՞նչ ըմբռնումներ, ի՞նչ համոզումներ եւ հրատարակչական ի՞նչ սկզբունքներ սա դարու հեղինակներուն եւ մեկենասներուն քով:

1 Մատենադարանի ընկերութեան պաշտօնական եւ բուն անունն է. «Ընկերութիւն Ազգային Մատենադարանին Հայոց, հաստատեալ 9 Մարտ 1877: — «Ընկերութեանս նպատակն է Ազգային Մատենադարանն ու Թանգարանը ձօնացունել, բանասիրական եւ հնագիտական հետազոտութիւններ ընել եւ հրատարակել ի տեղեկութիւն»: